ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հ. ՀԱԿՈԲՅԱՆԻ ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԻՊՐՈՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անունը, ազգանունը**
   Հրանուշ Հակոբյան
2. **Զբաղեցրած պաշտոնը**
   ՀՀ սփյուռքի նախարար
3. **Գործուղման վայրը և ժամկետները**
   - Բելգիայի Թագավորություն և Կիպրոսի Հանրապետություն ս. թ. հոկտեմբերի 17-21-ը
4. **Հրավիրող կողմը՝**
   - Կիպրոսի Հանրապետության նախագահի արտերկրյա և հումանիտար հարցերով հանձնակատար Ֆոտիու Ֆոտիս
   - ՀՅԴ Եվրոպայի Հայ Դատի հանձնախմբի նախագահ Գասպար Կարապետյան:
5. **Գործուղման նպատակը՝**
   - Մասնակցություն սփյուռքի հարցերի շուրջ Կիպրոս-Հայաստան-Հունաստան առաջին եռակողմ հանդիպմանը,
   - Մասնակցություն Եվրոպայի հայերի 4-րդ համագումարին,
   - Համայնքային հանդիպումների կազմակերպում:
6. **Քննարկման թեմաները՝**
   - «Հայաստան-Սփյուռք» 6-րդ համաժողովի արդյունքների մասին,
   - Համյանքային կառույցների ղեկավարների հետ «Հայաստան-Սփյուռք» 6-րդ համաժողովի արդյունքներից բխող ծրագրերի իրականացման մասին:
   - ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ սկսված «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» շարժման ընդլայնում,
   - Տուրիզմի զարգացմանը նպաստող քայլերի և բիզնեսմենների խմբերի Հայաստան այցելությունների կազմակերպում:
   - Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության, Կիպրոսի Հանրապետության նախագահի՝ արտերկրյա և հումանիտար հարցերով հանձնակատարի գրասենյակի և Հունաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջև սփյուռքի հարցերի շուրջ համագործակցության վերաբերյալ եռակողմ փոխմբռնման հուշագրի կնքման

կամ եռակողմ համագործակցության վերաբերյալ մեկ այլ փաստաթղթի ստորագրման նպատակահարմարության շուրջ բանակցություն,
- Երեք կողմերի (Հայաստան, Հունաստան, Կիպրոս) մասնկացությամբ արտերկրում իրենց կազմակերպված սփյուռքների միջև համագործակցությունն առավել սերտացում,
- 2018թ. գարնանը Ֆրանսիայում երեք սփյուռքների երիտասարդների եռակողմ հանդիպման կազմակերպման մասին հարցեր, փոխգործակցության և կոնկրետ գործողությունների ծրագրի մշակում:

7. Հանդիպումները, ելույթները, հարցազրույցները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Հանդիպումներ՝

- ԵԽԽՎ նախագահ Ստելլա Կիրիակիդեսի հետ,
- Կիպրոսի նախագահի՝ հումանիտար և արտերկրյա հարցերով հանձնակատար Ֆոտիու Ֆոտիսի հետ,
- Հունաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Տերենս Նիկոլաոս Քուիքի հետ,
- Կիպրոսի հոգևոր առաջնորդ արքեպիսկոպոս Կրիսոստոմոս 2-րդ-ի հետ,
- Կիպրոսի Ներկայացուցիչների պալատի նախագահ պարոն Դեմիտրիս Սիլլուրիսի հետ,
- Կիպրոսում Հայ Առաքելական եկեղեցու կաթողիկոսական փոխանորդ արքեպիսկոպոս Խորեն Դողրամաջյանի հետ,
- Կիպրոսի հայ համայնքի ներկայացուցիչնրի հետ,
- Կիպրոսի ներկայացուցիրչների պալատում հայ համայնքի պետական ներկայացուցիչ պարոն Վարդգես Մահտեսյանի հետ,
- ՀՅԴ Եվրոպայի Հայ Դատի հանձնախմբի նախագահ Գասպար Կարապետյանի հետ:
- Բելգիայի Թագավորությունում և Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունում ՀՀ դեսպան Թաթուլ Մարգարյանի հետ:

Ելույթներ՝

- Բրյուսելի Հայ տանը՝ Եվրոպայի հայերի 4-րդ համագումարի ժամանակ,
- Բրյուսելի Հայ տանը՝ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ,
- Կիպրոսի ազգային առաջնորդարանում՝ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ,

Հարցազրույցներ՝

- Համատեղ մամուլի ասուլիս Կիպրոսի նախագահական նստավայրում,

Բարձրացված հարցեր՝

- Շարունակել և ընդլայնել մասնագիտական ընկերակցությունների գործունությունը,
- Շարունակել պայքարը Հայոց ցեղասպանության ճանաչման դատապարտման և հետևանքների վերացման ուղղությամբ,
- Աշխատանքներ տանել բելգիացի, կիպրացի և հայ գործարարների կողմից ներդրումների իրականացում Հայաստանի Հանրապետությունում,
- Հասնել այն բանի, որ յուրաքանչյուր հայ այցելի Հայաստան, ճանաչի իր Հայրենիքը, նպաստել տուրիզմի զարգացմանը, թափ հաղորդել «3 տարին մեկ անգամ հանգստանալ Հայաստանում» շարժմանը,
- Մասնակցել ՀՀ սփյուռքի նախարարության ծրագրերին,
- Լուրջ ուշադրություն դարձնել հայոց լեզվի ուսուցման հարցերին, «Տանը խոսենք հայերեն» շարժումը դարձնել յուրաքանչյուր կառույցի խնդիրը,
- Զբաղվել համայնքից հեռացած հայերին համայնքային կառույցների աշխատանքներում ներգրավելու հարցով:

Հոկտեմբերի 17, 2017թ.

Նախարարը ժամանեց Բրյուսել:

Հոկտեմբերի 17, 2017թ.

- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը հանդիպել է Բելգիայի Թագավորությունում և Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունում ՀՀ դեսպան Թաթուլ Մարգարյանի հետ, որի ընթացքում քննարկել են «Հայաստան-Սփյուռք» 6-րդ համաժողովի արդյունքները, ՀՀ սփյուռքի նախարարության ծրագրերը, և առաջարկվել է Հայաստանի Հանրապետության և համայնքի տարբեր կառույցների հետ քննարկել համահայկական խորհրդի մեխանիզմները:
- Այնուհետև նախարարը այցելել է Բրյուսելի Հայ տուն, որտեղ հանդիպել է համայնքի ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում նախարար Հ. Հակոբյանը ներկայացրել է նախարարության գործունեությունը, ծրագրերը, ինչպես նաև հանգամանորեն խոսել է ներկա պահին Հայաստանի Հանրապետությունում ներդրումներ անելու անհրաժեշտության և բարենպաստ պայմանների երաշխավորման մասին:

Հոկտեմբերի 18, 2017թ.

- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը Բրյուսելի Հայ տանը մասնակցել է Եվրոպայի հայերի 4-րդ համագումարի բացման արարողությանը, որի ընթացքում հանդես է եկել ողջույնի խոսքով: Իր խոսքում նախարարը կարևորել է քաղաքական, պատմական, ազգային մեծ հնչեղություն ունեցող համաժողովի անցկացումը, որի օրակարգում քննարկվելու են Հայոց ցեղասպանությանը, Արցախի հիմնախնդրին, հայապահպանությանը նվիրված շատ կարևոր հարցեր: Նախարարն անդրադարձել է Եվրոպայում հաստատված հայերին, ովքեր անուն և պատիվ են ձեռք բերել դեռևս անհիշելի ժամանակներից և իրենց ավանդը ներդրել նաև համաշխարհային քաղաքակրթության զարգացմանը: Հրանուշ Հակոբյանը խոսել է հայերի ներդրումի մասին Եվրոպայում, մասնավորապես՝ Սուրբ Ղազար կղզում հաստատված Մխիթարյանների միաբանության, Լիսաբոնի Գալուստ Գյուլբենկյան թանգարանի մասին: Նախարարն իր ելույթում կարևորել է հայրենադարձության հարցը, անդրադարձել հայկական համայնքից հեռացածների խնդրին՝ հայադարձությանը, ԵԱՏՄ տնտեսական լավագույն հարթակին, ԵՄ-ի հետ նախատեսվող համաձայնագրի կնքմանը: Հայաստանում իրականացվող բարեփոխումներին և ընդգծել, որ միասնաբար պետք է կարողանանք հզորացնել Հայաստանը:

Հոկտեմբերի 19, 2017թ.

- Օրվա առաջին կեսին նախարարը մասնակցել է համաժողովի աշխատանքներին, որոնք շարունակվում էին Եվրախորհրդարանում: Այդ ընթացքում նա հանդիպել է Եվրախորհրդարանի պատգամավոր Ֆրանկ Էնգելի հետ:

Հոկտեմբերի 19, 2017թ.
Նախարարը երեկոյան ժամանեց ք. Լառնակա և մեկնեց ք. Նիկոսիա:

Հոկտեմբերի 20, 2017թ.

- Առավոտյան տեղի է ունեցել ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի և Կիպրոսի նախագահի՝ արտերկրյա և հումանիտար հարցերով հանձնակատար Ֆոտիո Ֆոտիսի միջև երկկողմ հանդիպումը՝ հանձնակատարի գրասենյակում: Հանդիպման ընթացքում քննարկվել են ս.թ. հունիսի 19-ին ՀՀ սփյուռքի նախարարության և Կիպրոսի

նախագահի՝ արտերկրյա և հումանիտար հարցերով հանձնակատարի գրասենյակի միջև կնքված փոխըմբռնման հուշագրից բխող համագործակցության հետագա հարցերը և անելիքները: Կողմերը երկուստեք ընդգծել են և կարևորել Ամերիկայի Հայ Դատի գրասենյակի (Արևելյան տարածաշրջան), Հույն-ամերիկյան առաջնորդության խորհրդի, Կիպրա-ամերիկյան կազմակերպությունների դաշնության և «Կիպրոսի արդարադատության» միջազգային համակարգող խորհրդի (PSEKA) միջև 2016 թ. ապրիլի 9-ին Նյու Յորքում՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում ստորագրված Փոխըմբռնման հուշագրի կարևորությունը՝ նշելով, որ դրանք լավ հիմքեր են ստեղծել նաև այլ երկրներում սփյուռքյան համայքների միջև համագործակցության զարգացման առումով:

- Այնուհետև ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը Կիպրոսի նախագահի՝ արտերկրյա և հումանիտար հարցերով հանձնակատար Ֆոտիու Ֆոտիսի ուղեկցությամբ այցելել է Կիպրոսի հոգևոր առաջնորդ արքեպիսկոպոս Կրիսոստոմոս 2-րդ-ի նստավայր, որտեղ տեղի է ունեցել հանդիպում արքեպիոսկոպոսի հետ: Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել հայ-կիպրական ռազմավարական հարաբերություններին, Արցախի և Կիպրոսի հիմնախնդիրներին: Նախարարն ընդգծել է հայ և կիպրական եկեղեցիների միջև համագործակցության կարևորությունը, որը ևս կարևոր միջոց է երկու ժողովուրդների միջև դարավոր հոգևոր ու մշակութային կապերն ամրապնդելու առումով, շնորհակալություն է հայտնել Կիպրոսում մեր թեմի հետ ջերմ հարաբերություններ ունենալու համար:
- Ապա Կիպրոսի ներկայացուցիրչների պալատում տեղի է ունեցել հանդիպում՝ Կիպրոսի Ներկայացուցիչների պալատի նախագահ պարոն Դեմիտրիս Սիլլուրիսի հետ: Հանդիպման ընթացքում նախարար Հրանուշ Հակոբյանը նշել է, որ հայ ինքնության պահպանման գործում մեծ է Կիպրոսի իշխանությունների և ժողովրդի դերը և, որ հենց նրանց բարեկամական վերաբերմունքի շնորհիվ հայ համայնքը կարողացել է գոյատևել՝ պահպանելով իր ազգային նկարագիրը՝ լեզուն, մշակույթը, և այժմ էլ շարունակում է ապրել և բարգավաճել: Նախարարը հայտնել է գոհունակություն հայ համայնքի հանդեպ ցուցաբերվող մշտական ուշադրության և պետական հոգատարության համար, որի շնորհիվ պահպանվում է հայ-կիպրական դարավոր հոգևոր-մշակութային ժառանգությունն ու ավանդույթները, պետական բյուջեով ֆինանսավորվում են կրթամշակութային ծրագրերը և համայնքային

կառույցների գործունեությունը: Նախարարը ողջունել է նաև 2015թ. Կիպրոսի Ներկայացուցիչներ պալատի կողմից (օրենսդիր մարմին) Հայոց ցեղասպանության ժխտողականությունը քրեորեն պատժող օրենքի ընդունումը՝ նշելով, որ այս քայլով Կիպրոսը լուրջ մարտահրավեր նետեց ժխտողականությանը և հավատարիմ մնաց համամարդկային արժեքներին և սկզբունքներին:

- Կիպրոսի ներկայացուցիչների պալատում նախարարը հանդիպել է ԵԽԽՎ-ի նոր ընտրված նախագահ Ստելլա Կիրիակիդեսի հետ, շնորհավորել ընտրվելու կապակցությամբ և համոզմունք հայտնել, որ ԵԽԽՎ-ում մեր պատվիրակությունները կշարունակեն սերտ համագործակցությունը:
- Նույն օրը նախագահական նստավայրում տեղի է ունեցել եռակողմ հանդիպում ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի, Կիպրոսի նախագահի՝ հումանիտար և արտերկրյա հարցերով հանձնակատար Ֆոտիու Ֆոտիսի և Հունաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Տերենս Նիկոլաոս Քուիքի միջև: Հանդիպման ընթացքում երեք կողմերը կարևորել են հայկական, կիպրական և հունական սփյուռքների միջև կապի ակտիվացվումն ու համագործակցության սերտացումը, որպեսզի անհրաժեշտության դեպքում կարողանան հանդես գալ միասնական գործողություններով և աջակցել միմյանց տարբեր խնդիրների լուծման գործում: Նախարարը նշել է, որ միասին համագործակցելով կարելի է ավելի արդյունավետ օգտագործել սփյուռքների ներուժը և անհրաժեշտ է եռակողմ համագործակցությունն օգտագործել որպես օժանդակ դիվանագիտական միջոց՝ իրենց համատեղ շահերին աջակցելու նպատակով: Որպես համագործակցության օրինակ՝ մեծապես կարևորվել է Ամերիկայի Հայ Դատի գրասենյակի (Արևելյան տարածաշրջան), Հույն-ամերիկյան առաջնորդության խորհրդի, Կիպրա-ամերիկյան կազմակերպությունների դաշնության և «Կիպրոսի արդարադատության» միջազգային համակարգող խորհրդի (PSEKA) միջև 2016 թ. ապրիլի 9-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների Նյու Յորք քաղաքում ստորագրված Փոխըմբռնման հուշագիրը: Երեք Կողմերը համաձայնվել են նպաստել Ամերիկայի Միացյալ Նահանգներում ակադեմիական ինստիտուտների, մշակութային կենտրոնների, լրատվական խմբերի և գիտական կենտրոնների միջև համատեղ տեղեկատվական փոխանակման նախաձեռնությունների և նախագծերի խթանմանը, որոնք նպատակ ունեն նպաստելու նրանց ընդհանուր

արժեքներին և սփյուռքի հետ կապված հարցերին: Որոշվել է հաջորդ տարվա գարնանը Ֆրանսիայում հրավիրել երեք սփյուռքների երիտասարդների եռակողմ հանդիպում, որպեսզի այս կարևորագույն փոխգործակցությունը վերածվի կոնկրետ գործողությունների և իր նպաստը բերի սփյուռքի հարցերի վերաբերյալ լավագույն փորձի և գիտելիքի փոխանակմանը: Նշված քննարկումներց հետո տեղի է ունեցել մամլո ասուլիս, որտեղ երեք կեղմերը լրագրողներին ներկայացրել են քննարված թեմաների շրջանակները:

- Այնուհետև ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը Կիպրոսի նախագահի՝ արտերկրյա և հումանիտար հարցերով հանձնակատար Ֆոտիու Ֆոտիսի ուղեկցությամբ այցելել է «Makedonitissa», ռազմական հուշահամալիր և ռազմական գերեզմանատուն, որտեղ միասին ծաղկեպսակ են դրել և հարգանքի տուրք մատուցել հունական և կիպական զոհերի հիշատակին:
- Երեկյան տեղի է ունեցել հանդիպում Կիպրոսում Հայ Առաքելական եկեղեցու կաթողիկոսական փոխանորդ Խորեն արքեպիսկոպոս Դողրամաջյանի, ապա համայնքի ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում նախարարն ընդգծել է եկեղոցու դերը համայնքի ազգային ինքնության և հայկական ինքնագիտակցության համար: Նախարարը հայկական ինքնության խնդիրը համարել է ազգի առջև ծառացած ռազմավարական խնդիր: Հայկական ինքնության առանձնահատկությունների մասին խոսելով՝ նախարարը նշել է, որ այն ցեղասպանությունից հետո խեղվել է և Հայրենիքից դուրս լուրջ փոփոխությունների է ենթարկվում: Հայկական ինքնության մասին խոսելով՝ նախարարն անդրադարձել է խառնամուսնություններին և դրանց արդյունքում ծնված երեխաների ապագային, հայկականությունից հեռացած հայերին, աշխարհաքաղաքացի լինել ցանկացողներին, իսլամացած, ինչպես նաև իրենց արմատներին վերադառնալ ցանկացող հայերին: Այս ամենի կողքին Հրանուշ Հակոբյանը կարևորել է նաև հայ մնալու երաշխիքները՝ եկեղեցի, դպրոց, պատմական հիշողություն, ընտանիք, ավանդույթների պահպանում, հայկական անուն, ազգանուններ, ազգային և մշակութային կառույցներ, մամուլ, հայկական խորհրդանիշեր, իսկ ամենակարևորը, որն ինքնության պահպանման ամենամեծ ռահվիրանն է, դա Հայրենիքն է, անկախ Հայաստանի ու Արցախի գոյությունը: Եզրափակելով իր խոսքը՝ նախարար Հրանուշ Հակոբյան նշել է, որ հայ երիտասարդներին պետք է կապել Հայրենիքի

հետ, նրանց մասնակիցը դարձնել նախարարության ծրագրերին: Նախարարը գոհունակություն է հայտնել, որ ամեն տարի «Նարեկ» վարժարանի շրջանավարտները մասնակցում են ՀՀ սփյուռքի նախարարության «Արի տուն» ծրագրին:

Հոկտեմբերի 21, 2017թ.

- Առավոտյան ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը Կիպրոսի նախագահի՝ արտերկրյա և հումանիտար հարցերով հանձնակատար Ֆոտիու Ֆոտիսի ուղեկցությամբ այցելել է հրադադարի վայր, Նիկոսիայի Լեդրա փողոց:
- Այնուհետև նախարար Հ. Հակոբյանը մեկնել է Այա Նապա քաղաք, որտեղ տեղի է ունեցել հանդիպում Կիպրոսի ներկայացուցիրչների պալատում հայ համայնքի պետական ներկայացուցիչ Վարդգես Մահտեսյանի հետ: Հանդիպման ընթաքում անդարադարձ է կատարվել Հայաստան-Կիպրոս-Հունաստան եռակողմ համագործակցությանը, այնուհետև նախարարը ներկայացրել է Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողովի արդունքում ընդունված բոլոր որոշումները և անելիքները, որոնք պետք է իրականացվեն գալիք երեք տարիների ընթաքցում: Հանդիպմանը նախարարն ընդգծել է նաև հաջորդ տարի Հայաստանի Առաջին Հանրապետության և Մայիսյան հերոսամարտերի 100-ամյակները, ինչպես նաև Երևանի 2800-ամյակին նվիրված միջոցառումները կիպրահայ համայնքում կազմակերպելու, համադրելու և նախաձեռնություններ իրականացնելու կարևորությունը:

Հոկտեմբերի 21, 2017թ.

Երեկոյան նախարարը վերադարձել է Երևան:

8. **Գործուղվողը՝**
   Հրանուշ Հակոբյան
9. **Ստորագրությունը, ամսաթիվը**
   25. 10. 2017թ.